ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 40 - 41 (16338) ՇԱԲԱԹ, 13 ՀՈՒՆԻՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԲՅՈՒՋԵ-2015

ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

Հունիսի 11-ին Վրաստանի կառավարության քննարկմանը ներկայացվեց 2015 թվականի պետբյուջեի ճշգրտված տարբերակը: Այդ մասին հայտարարեց փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին:

Փոխվարչապետի խոսքերով, բյուջեի ճշգրտման աշխատանքն իրականացրել է ֆինանսների նախարարությունը, որն էլ բոլոր գերատեսչությունների հետ խորհրդատվություններ է անցկացրել բյուջեի կրճատման հարցերով:

Իր հերթին, Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հայտարարեց, որ պետբյուջեի ճշգրտված տարբերակը չի առնչվում սոցիալական ծախսերին: Ֆինանսների նախարարի խոսքերով, փոփոխություններն առնչվում են բյուջեի հոդվածների նշանակալից հատվածին, թեպետ դրանք սոցիալական ծրագրերին չեն վերաբերում, որոնք կֆինանսավորվեն լիարժեք: «Եկամուտների հոդվածներով, բյուջեի փոփոխությունն իրականացվում է միկրոտնտեսական իրավիճակի հաշվառմամբ, եկամտային բազայի ցուցանիշի հստակեցմամբ: Իսկ ինչ վերաբերում է սոցիալական պարտավորություններին, ապա մեր կառավարության համար դրանք առաջնահերթային են եւ առանձնակի հոգատարության առարկա»,- հայտարարեց Նոդար Խադուրին:

Նշենք, որ բյուջեի ճշգրտված տարբերակում նախատեսվում է դրա 200 միլիոն լարիով նվազեցում, թեպետ փորձագետների հավաստմամբ, նվազեցումը կազմելու է առնվազն 300 միլիոն լարի: Երկրի հաստատված բյուջեի համաձայն, ընթացիկ տարվա առա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Հունիսի 10-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հրավերով, երկօրյա այցով, Թբիլիսիում էր գտնվում Սաուդյան Արաբիայի Ալ Վալիդ իբն Թալալ իբն Աբդուլազիզ Ալ Սաուդ արքայազնը:

Այցի շրջանակներում, արքայազնը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ:

Վրաստանի վարչապետի եւ Սաուդյան Արաբիայի արքայազնի առանձնազրույցից հետո կայացած պատվիրակությունների ընդլայնված հանդիպմանը, կողմերը քննակեցին երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարներին առնչվող հարցեր: Վրաստանի վարչապետն ու Սաուդյան Արաբիայի արքայազնը առանձնակի ուշադրություն հատկացրին ռազմավարական եւ Վրաստանում ներդրումների իրականացման հարցերի քննարկմանը:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հետ արքայազնի հանդիպման օրակարգում երկու երկրների միջեւ առեւտրա-տնտեսական հարաբերությունների հարցերն էին: Հանդիպմանը Վրաստանի նախագահը, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու ներկայացմամբ, Սաուդյան Արաբիայի Ալ Վալիդ իբն Թալալ իբն Աբդուլազիզ Ալ Սաուդ արքայազնին շնորհեց Վրաստանի պատվավոր քաղաքացու կոչում եւ նրան հանձնեց համապատասխան վկայական:

Այցի շրջանակներում, Սաուդյան Արաբիայի արքայազնը ծանոթացավ Վրաստանի ներդրումային օբյեկտներին:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՀԱՆՐԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆ Է»

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին մասնակցեց ոչ կառավարական «Միջազգային թափանցիկություն-Վրաստան» կազմակերպության կողմից անցկացված հակակոռուպցիոն համակարգի գնահատման շնորհանդեսին:

Իր խոսքում նախագահը նշեց, որ, ներկա դրությամբ, վրաց հասարակայնությունն ապրում է ակտիվ բանավեճի մթնոլորտում: «Համոզված եմ, որ հանրային ակտիվությունը մի կողմից մեր բնավորության հատկանիշն է, իսկ մյուս կողմից՝ Վրաստանի ժողովրդավարական զարգացման երաշխիքը»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Նախագահի խոսքերով, իրականացված ուսում-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՓՈԿԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՀԻԱՑՐԻՆ ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ԻՐԵՆՑ ԻՄԱՑՈՒԹՅԱՄԲ»

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, «Նախարարը զրուցում է երիտասարդների հետ» նախագծի շրջանակներում, Նինոծմինդայի մունցիպալիտետի Փոկա գյուղում հանդիպում ունեցավ տեղի հանրային դպրոցի աշակերտների հետ:

Չորսամսյա ընդմիջումից հետո, նախարար Թեա Ծուլուկիանին Փոկա եկավ Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանի եւ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանի հետ: Այցի օրը Փոկայում էր գտնվում նաեւ արդարադատության փոխնախարար Ալեքսանդր Տաբատաձեն:

Թեա Ծուլուկիանին դպրոցի աշակերտների հետ խոսեց վրաց լեզվի իմա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՆԴԳԾՎԵՑ ԵՐԿԿՈՂՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Թբիլիսիում հունիսի 8-11-ին ՆԱՏՕ-ի ռազմաստրատեգիական խորհրդաժողովին մասնակցեց Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովի գլխավորած պատվիրակությունը:

Խորհրդաժողովի աշխատանքի ավարտից հետո, հունիսի 10-ին սկսվեց Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը Վրաստան:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԻԶԱՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ՝ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՌԱՆՑ ԱՅՑԵԳՐԻ

Վրաստանի կառավարությունը հաստատել է այն 94 երկրների ցուցակը, որոնց քաղաքացիները կարող են մուտք գործել Վրաստան եւ մեկ տարի գտնվել երկրի տարածքում առանց այցեգրի:

Բացի այդ, անայցեգրային պայմանակարգով եւ մեկ տարվա ընթացքում առանց այցեգրի Վրաստանի տարածքում գտնվելու իրավունք է տրվում այն օտարերկրյա քաղաքացիներին, ովքեր ունեն ՄԱԿ-ի անձնագիր: Նաեւ օտարերկրյա քաղաքացիները կարող են անայցեգրային մուտքի եւ երկրում գտնվելու թույլտվություն ստանալ կառավարության որոշմամբ:

Վերոնշյալ որոշումը հրապարակվել է Վրաստանի օրենսդրական տեղեկատուում եւ արդեն ուժի մեջ է մտել:

Մեկ տարվա ընթացքում առանց այցեգրի Վրաստանի տարածքում գտնվելու իրավունք է շնորհված, մասնավորապես Հայաստանի, Ադրբեջանի եւ ուրիշ ետխորհրդային հանրապետությունների, ինչպես նաեւ Եվրամիության անդամ երկրների, Միացյալ Նահանգների եւ այլ երկրների քաղաքացիներին:

«ՈՍԿԵ ՎԻԶԱՅՈՎ»՝ ՎՐԱՍՏԱՆ

Վրաստանում ներդրվում է «Ոսկե վիզա»: Վրաստանի խորհրդարանն առանձին փոփոխություններ է մշակել այն օրենքում, որով սահմանված է երկրի տարածքում 35 հազար դոլարից ավելի մեծ արժողության անշարժ գույք ունեցող արտասահմանցիներին ժամանակավոր կեցության վկայականի հանձնման հարցով:

Օրինանախագիծն արդեն ընդունվել է եւ հավանության դեպքում, մի շարք երկրների քաղաքացիները (երկրների ցուցակը մոտ ժամանակներս կկազմվի եւ կհաստատվի կառավարության կողմից) կստանան տարվա 360 օրն երկրում ապրելու հնարավորություն: Նշենք, որ մինչեւ անցյալ տարվա սեպտեմբեր առանձին երկրների օտարերկրյա քաղաքացիներն ունեին նման արտոնություն, սակայն Վրաստանը սահմանափակեց այդ ժամկետը եւ սահմանեց վեց ամսվա ընթացքում 90 օր երկրում գտնվելու իրավունք:

Նշենք նաեւ, որ վերջին ժամանակներս կտրուկ աճել է անշարժ գույքի հետ կապված գործարքների թիվը: 2009 թվականի համեմատությամբ, այն ավելացել է 5 տոկոսով, իսկ 2014 թվականի տվյալներով, անշարժ գույքի հետ կապված գործարքների աճը կազմել է 6 տոկոս եւ հասել 882 միլիոն դոլարի:

Օտարերկրացիների թվում Վրաստանում բնակտարածքների պահանջարկն ամենաբարձրն է Ադրբեջանի, Թուրքիայի եւ Չինաստանի քաղաքացիների մոտ: Այս տարի անշարժ գույքի ձեռքբերման հարցում որոշակի հետաքրքրություն են դրսեւորում նաեւ Արեւմտյան Եվրոպայի եւ Պարսից ծոցի երկրների քաղաքացիները:

ԲՅՈՒՋԵ-2015

ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ջին կիսամյակում բյուջե էր մուտք գործելու 4,53 միլիարդ լարի, իսկ երկրորդ կիսամյակում ծրագրված էր ներգրավել 5,3 միլիարդ լարի: Սակայն, ինչպես գտնում են փորձագետները, տնտեսական ներկայիս իրավիճակի պայմաններում դա դժվար հասանելի մակարդակ է: Եթե անգամ ընթացիկ տարում գրանցվի 2 տոկոսի տնտեսական աճ, միեւնույն է, կանխագծած մակարդակը մնում է անհասանելի եւ տարբերությունը կկազմի առնվազն 300-350 միլիոն լարի:

Հիշեցնենք, որ արդեն երրորդ տարին է, ինչ պետբյուջեի կատարումը դրվում է հարցականի տակ: Դեռեւս 2013 թվականի պետբյուջեն իրականացվում էր լուրջ խախտումներով, 2014 թվականի պետբյուջեի եկամուտների հոդվածը իրականում կատարվեց, սակայն լուրջ հիմնախնդիրներ ծագեցին ծախսումների հարցում:

Ըստ երեւույթին, բյուջեի կատարման վերջին տարիների բացասական միտումն այսօր էլ իրեն զգացնել է տալիս, թեպետ ֆինանսների գերատեսչությունում վստահեցնում են, որ ընթացիկ տարում 2 տոկոսի տնտեսական աճը բավականին իրատեսական է, եւ դրա հաշվարկումով էլ իրականացվել է բյուջեի ճշգրտումը:

Գործադիր իշխանությունից ստացված վերջին տեղեկատվության համաձայն, բյուջեի հստակեցումը շարունակվում է: Կառավարության նիստի ավարտից հետո, ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հայտարարեց, որ կանխագծված 5-ի փոխարեն, տնտեսական աճը ծրագրում են հասցնել 2 տոկոսի, իսկ արժեզրկման մակարդակը՝ 3 տոկոսի: Այսօր վստահությամբ կարող եմ ասել, որ որոշվել է 100 միլիոն լարիով նվազեցնել գանձատան պարտավորությունների արժեզրկումը: Մեզ հանձնարարել են շարունակել խորհրդատվությունները նախարարությունների հետ եւ հաջորդ շաբաթ ներկայացնել հստակեցված տվյալները, թե որ գերատեսչությունում ինչ ուղղությամբ է իրականացվելու տնտեսումը»,- հայտարարեց Խադուրին եւ հավելեց, որ բյուջեի վերանայումը նախատեսում է նաեւ ինքնակառավարման համար հատկացված միջոցների վերանայում: «Ծրագրում ենք նաեւ ակտիվացնել խորհրդատվությունների տեղական ինքնակառավարման մարմինների հետ, որպեսզի վերջիններս էլ վերանայեն իրենց բյուջեն եւ կատարեն կառավարության կողմից առաջադրած պայմանները, այն հաշվով, որպեսզի պետբյուջեի պակասորդը չգերազանցի ՀՆԱ-ի 3 տոկոսը»,- հայտարարեց Խադուրին:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԱԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ Է ՏԱՐՎՈՒՄ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ»

Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ կառավարությունը մեծ նշանակություն է տալիս եկամտահարկի ազատականացման հարցին եւ այդ ուղղությամբ ակտիվ աշխատանք է իրականացնում:

«Մենք աշխատում ենք եկամտահարկի հստակեցման ուղղությամբ: Դեռեւս օրինանախագիծը պատրաստ չէ, սակայն մտադիր ենք զգալիորեն ազատականացնել այն»,- հայտարարեց փոխվարչապետը՝ նշելով, որ եկամտահարկի վերացման պահանջով հանդես են եկել գործարար շրջանների ներկայացուցիչները:

Մեկնաբանելով վիճակագրական ծառայության տվյալներն այն մասին, որ 2014 թվականի առաջին եռամսյակում, նախորդ տարվա համեմատությամբ, օտարերկրյա ներդրումները կրճատվել են, էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ եռամսյակային ցուցանիշների համադրումը սխալ մոտեցում է: «Մասնավորապես, տարվա վերջին մենք հուսով ենք, որ ներդրումային դինամիկան կփոխվի»,- հայտարարեց Կվիրիկաշվիլին եւ հավելեց, որ ներդրումային քաղաքականության վրա մեծ ազդեցություն են գործում արտաքին գործոնները: Ըստ Կվիրիկաշվիլու, նշանակալից է տարբեր երկրներում նկատվող արժեզրկման գործոնը, ինչպես նաեւ նավթի համաշխարհային գնի տատանումը:

ՎՐԱՍՏԱՆ-ՉԻՆԱՍՏԱՆ

ԿԱՆԽԱԳԾՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 8-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Չինաստանի ժողովրդական ներկայացուցչական համագումարի մշտական կոմիտեի նախագահ Չեն Չանգչի գլխավորած պատվիրակությունը:

Այցի շրջանակներում, պատվիրակության հետ հանդիպում ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Նախագահի նստավայրում կայացած հանդիպմանը կողմերը քննարկեցին վրաց-չինական հարաբերությունները, նշեցին դրանց բազմաբնույթ հնարավորությունները մշակույթի, էկոնոմիկայի եւ քաղաքականության ոլորտներում:

Տնտեսական համագործակցության շրջանակներում, ընդգծվեց «Մետաքսե մեծ ճանապարհ» ռազմավարական նախագծի նշանակությունը:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ Չինաստանի ժողովրդական ներկայացուցչական համագումարի մշտական կոմիտեի նախագահ Չեն Չանգչիի հանդիպմանը նշվեց, որ վերջին 13 տարիներին սույն այցն առաջինն է, որն աչքի է ընկնում նման բարձր մակարդակով, ինչը երկու երկրների միջեւ հարաբերությունների ակտիվացման նախադրյալ է:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին վրաց-չինական հարաբերությունների եւ դրա զարգացման հեռանկարներին առնչվող ռազմավարական հարցերը:

Հանդիպմանն առանձնակի նշանակություն հատկացվեց տարածաշրջանային եւ համաշխարհային ենթակառույցային նախագծերին, մասնավորապես՝ «Մետաքսե մեծ ճանապարհ» նախագծին:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՆԴԳԾՎԵՑ ԵՐԿԿՈՂՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այցի առաջին օրը կայացավ Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վախթանգ Կապանաձեի եւ Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովի հանդիպումը:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին պաշտպանական ոլորտում վրաց-հայկական հարաբերություններին եւ երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր: Կողմերը կարեւորեցին պաշտպանական ոլորտում երկու հարեւան երկրների միջեւ համագործակցությունը, պատրաստակամություն հայտնեցին ընդլայնել փոխգործակցությունը ռազմական կրթության, անձնակազմի բուժապահովման, վիրավոր զինծառայողների առողջության վերականգնման եւ պրոֆեսիոնալ սերժանտական կազմի պատրաստության ոլորտներում:

Հունիսի 10-ին Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի եւ նրա գլխավորած պատվիրակության անդամների հետ հանդիպում ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Հանդիպումներին քննարկվեցին վրաց-հայկական երկկողմ հարաբերություններին եւ տարածաշրջանային անվտանգության խնդիրներին առնչվող հարցեր: Զրուցակիցները միակարծիք էին պաշտպանության ոլորտում վրաց-հայկական համագործակցության արժեւորման հարցում՝ ընդգծելով երկկողմ կապերի ընդլայնման եւ նոր ոլորտների ներառման նպատակահարմարությունը:

Հայաստանի պատվիրակությունն այցելեց Մուխաթգվերդիի եղբայրական գերեզման, որտեղ թաղված են Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհված զինծառայողները, եւ հարգանքի տուրք մատուցեց նրանց հիշատակին:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի գլխավորած պատվիրակությունը հունիսի 11-ին վերադարձավ Երեւան:



G7

ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Աշխարհի գերտերությունների ղեկավարների մասնակցությամբ, Բավարիայում անցկացված G7 գագաթաժողովին քննարկվել են Ռուսաստանի եւ նրա դեմ նոր պատժամիջոցների կիրառման հարցերը: ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հայտարարությամբ, առայժմ նոր պատժամիջոցների կիրառման հարցը քննարկվել է ոչ թե քաղաքական, այլ տեխնիկական մակարդակում: Ըստ Օբամայի, դա նշանակում է, որ Արեւմուտքը պատրաստ է հավելյալ պատժամիջոցներ կիրառել, սակայն այն ժամանակ, երբ Ուկրաինայի հակամարտության կարգավորման համար ստեղծված Մինսկի գործընթացը մտնի փակուղի:

Մինչ այդ, յոթ գերտերությունների ղեկավարները պայմանավորվել են շարունակել ճնշումներ գործադրել Ռուսաստանի վրա, որպեսզի Մինսկում ձեռք բերված պայմանավորվածությունը հրադադարի չխախտման շուրջ պահպանվի:

ՈՒԿՐԱԻՆԱ

ԱՅՐՎՈՒՄ Է ԿԻԵՎԻ ՄԵՐՁԱԿԱ ՆԱՎԹԱԲԱԶԱՆ

Արդեն հինգերորդ օրն է, ինչ հրդեհ է բռնկվել Կիեւի մերձակա նավթաբազայում: Հրդեհի արդյունքում, պարբերաբար պայթում են նավթի տարողությունները: Նավթաբազայում հրդեհի հետեւանքով տուժածների թիվը հասել է 20-ի: Նրանցից հինգը զոհվել են: Բոցի բարձրությունը հասնում է 50 մետրի: Այրման վայրում աշխատում է շուրջ 100 հրշեջ:

Հարուցվել է մի քանի քրեական գործ, դիտարկվում է հրդեհի պատճառների մի քանի վարկած, ներառյալ՝ աշխատողների անփութությունը, հրկիզումը եւ վնասարարությունը: Ուկրաինայի իշխանությունների տվյալներով՝ բազան պատկանում է նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչի շրջապատին եւ պատշաճ ձեւով ձեւակերպված չի եղել:

ԹՈՒՐՔԻԱ

ՄԵՋԼԻՍՈՒՄ՝ ԵՐԵՔ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Հունիսի 7-ի Թուրքիայի խորհրդարանական 25-րդ ընտրությունների արդյունքներով, առաջին անգամ երկրի մեջլիսում է հայտնվել միանգամից երեք հայ պատգամավոր: Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամն է նաեւ, որ մեջլիսում հայտնվում է հայ կին պատգամավոր: Իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունից Թուրքիայի Ազգային մեծ ժողով է մտել լրագրող Մարգար Եսայանը, քրդական ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունից՝ Գարո Պայլանը, ընդդիմադիր Քեմալական հանրապետական ժողովրդական կուսակցությունից՝ իրավաբան Սելինա Դողանը:

Ընտրություններին իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունը ստացել է ձայների 40,85 տոկոսը (258 պատգամավոր), Հանրապետական ժողովրդական կուսակցությունը՝ 24,96 տոկոսը (132 պատգամավոր), «Ազգայնական շարժում» կուսակցությունը՝ 16,28 տոկոսը (80 պատգամավոր) եւ քրդական ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունը՝ 13,11 տոկոսը (80 պատգամավոր):

Ընտրություններին երկրի ներսում մասնակցել է ընտրելու հնարավորություն ունեցող քաղաքացիների 86,62 տոկոսը:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԳՈՐԾԱԴԻՐ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ ԵՆ

Հետայսու ներդրումների ազգային գործակալությունը կենթարկվի Վրաստանի վարչապետին:

Այդ մասին վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց հունիսի 5-ին, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, միջազգային ֆինանսական ու խորհրդատվական կազմակերպությունների եւ բիզնես ասոցիացիայի ներկայացուցիչների հետ կայացած հանդիպմանը:

Գործակալության գործունեությունում ծրագրված փոփոխությունները վերջինիս վերապահելու են կատարյալ լծակներ ներդրումների հարցերով բանակցությունների իրականացման հարցում, ինչը կնպաստի օտարերկրյա անմիջական ներդրումների ներհոսի ծավալի մեծացմանը:

Իրակլի Ղարիբաշվիլին համոզված է. որ վարչապետի ներդրումային գործակալության ենթակայությունը նշանակալի ավանդ կներդնի տարբեր նախարարությունների գործունեության համակարգման բարելավման եւ բոլոր մակարդակներով ներդրողների մատչելիության ապահովման ուղղությամբ:

Հանդիպմանը վարչապետը իր ելույթում խոսեց տնտեսական միտումների օտարերկրյա անմիջական ներդրումների դերի, ծրագրված նախագծերի եւ երկրի տնտեսական կայուն ու հաջող առաջընթացի նկատմամբ կառավարության դիրքորոշման մասին:

ՎԱՐԿԱՆԻՇ

ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՈՎ ՎՐԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԻՆՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է

«Համաշխարհային արդարադատության նախագծով» օրենքի գերակայության ինդեքսով, Վրաստանն առաջին տեղն է զբաղեցնում Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում, իսկ աշխարհի 102 երկրների մեջ 29-րդն է:

Նախորդ վարկանիշի համաձայն, Վրաստանը սանդղակում երկու միավորով բարելավել է դիրքը եւ ներկայումս անցել է այնպիսի երկրներից, ինչպիսիք են Իտալիան, Ռումինիան, Հունաստանը, Խորվաթիան եւ Հունգարիան:

«Համաշխարհային արդարադատության նախագծի» ուսումնասիրություններում արտահայտվել է 102 երկրներում օրենքի գերակայության վիճակը: Ուսումնասիրությունների համար օգտվել են 9 գործոնների շուրջ ամբողջացված 47 ինդիկատորներից, մասնավորապես՝ կոռուպցիայի բացակայությունից, կառավարման թափանցիկությունից, կառավարության իրավասությունների սահմանափակումից, հիմնարար իրավունքներից, կարգուկանոնից ու անվտանգությունից, կատարողականությունից, քրեական մակարդակից, քրեական եւ քաղաքացիական արդարադատությունից:

Ամենաբարձր միավորը Վրաստանն ստացել է կոռուպցիայի բացակայության հաշվարկումից: Բարձր է նաեւ թափանցիկ կառավարման ցուցանիշը:

Վերոնշյալ սանդղակում առաջատար դիրքերը գրավում են Դանիան, Նորվեգիան եւ Շվեդիան:

ԱԼՅԱՆՍ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Հունիսի 8-10-ը Թբիլիսիում անցկացվեց ՆԱՏՕ-ի ռազմավարական ռազմական գործընկերության (SMPC) ամենամյա խորհրդաժողովը:

Խորհրդաժողովին մասնակցեցին ՆԱՏՕ-ի անդամ եւ գործընկեր երկրների զինված ուժերի բարձրաստիճան ներկայացուցիչներ, ինչպես նաեւ փորձագետներ: Խորհրդաժողովի համակազմակերպիչներն են ՆԱՏՕ-ի վերափոխման միավորված հրամանատարությունը եւ Վրաստանի զինուժերը: Խորհրդաժողովին մասնակցեց նաեւ Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովի գլխավորած պատվիրակությունը:

Համաժողովը նպատակաուղղված էր Հյուսիսատլանտյան դաշինքի եւ գործընկերներ պետությունների միջեւ 2014 թվականի Ուելսի գագաթաժողովում համաձայնեցված «Փոխգործունակության հարթակ» նախաձեռնության կենսագործման շուրջ կարծիքների փոխանակմանը: Նոր նախաձեռնությունը միտված է համատեղ խաղաղապահ առաքելություններին մասնակցելու համար գործընկեր պետությունների զինված ուժերի անձնակազմի կրթության եւ ստորաբաժանումների պատրաստության համար բարենպաստ հնարավորությունների ապահովմանը:

ԱԼՅԱՆՍ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ոչ կառավարական «Գոու-գրուպ» կազմակերպության նախաձեռնությամբ, Ախալքալաքիի մունիցիպալիտետը երեք օրով հյուրընկալեց լրագրողների:

Մեդիա-շրջայցի նպատակն էր մունիցիպալիտետում առկա հիմնախնդիրները ներկայացնել վրաց, հայ, ռուս, ադրբեջանցի լրագրողներին: Լրագրողներին հնարավորություն տրվեց անմիջականորեն տեղացիներից տեղեկանալ Ջավախեթիի տարածաշրջանում առկա հիմնախնդիրներին: Հանդիպումներին լրագրողներից բացի, ներկա էին վրաց եւ հայ փորձագետներ:

Հյուրերը հանդիպում ունեցան Ախալքալաքիի մունիցիպալիտետի ոչ կառավարական հատվածի եւ տեղական իշխանության ներկայացուցիչների հետ: Տեղացիների խոսքերով, ամենածանր հիմնախնդիրը գործազրկության բարձր մակարդակն է, եւ շատերը աշխատանքի համար մեկնում են Ռուսաստան եւ Հայաստան: Հիմնախնդրի առկայությունն ընդունեցին նաեւ տեղական իշխանության ներկայացուցիչները, թեպետ նշեցին, որ, օբյեկտիվ պայմաններից ելնելով, դրա մակարդակի նվազեցումը մոտ ժամանակներում անիրատեսական է:

Լրագրողները բարձրացրին նաեւ այսպես կոչված, անջատողականության թեման, ինչը հարուցեց տեղի ոչ կառավարական կազմակերպությունների ու բնակիչների վրդովմունքը: Նրանց հայտարարությամբ, տարածաշրջանում անջատողականության վտանգ չկա եւ երբեք էլ չի եղել:

ՍԱԼՈՄԵ ՍԱՐԻՇՎԻԼԻ
«Ռեզոնանսի» թերթի թղթակից
հատուկ «Վրաստանի» համար

ՈՒՏԵՍՏՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ԲԱԹՈՒՄԻՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՏԵՍՏՆԵՐՆ ՈՒ ԽՄԻՉՔՆԵՐԸ

Հունիսի 8-ին Բաթումիում Հայաստանի գլխավոր հյուպատոս Արամ Գրիգորյանը մասնակցեց Շոթա Ռուսթավելու անվան պետական համալսարանի ռեկտորատի նախաձեռնությամբ համալսարանում սովորող վրացի եւ էթնիկ փոքրամասնությունների ուսանողների կողմից կազմակերպված ազգային ուտեստների ներկայացման շնորհանդեսին:

Միջոցառումը, որը կազմակերպվել էր առաջին անգամ, կրում էր «Միասնությունը բազմազանության մեջ է» խորագիրը:

Շուրջ երկու տասնյակ բաթումցի մեր հայրենակից ուսանողներին ազգային սեղանի պատրաստման գործում աջակցեցին Բաթումիում ՀՀ գլխավոր հյուպատոսությունն ու հայ համայնքը:

Իր ելույթում Բաթումիում ՀՀ գլխավոր հյուպատոսը կարեւորեց նման միջոցառումները՝ միմյանց ավելի լավ ճանաչելու, ազգային մշակույթների մերձեցման ուղիով առավել փոխըմբռնման հասնելու առումով: Նա համոզմունք հայտնեց, որ նման նախաձեռնությունները պետք է շարունակական լինեն ու վերաճեն նաեւ բարեգործական ակցիաների:



ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Առաջին եվրոպական խաղերի բացման արարողությանը մասնակցելու նպատակով, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին մեկնեց Բաքու: Այցի շրջանակներում, հունիսի 11-ին նա հանդիպում ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին տարածաշրջանի անվտանգությանն առնչվող հարցեր եւ գոհունակություն հայտնեցին երկկողմ համագործակցության զարգացման դրական դինամիկայի կապակցությամբ:

Հանդիպումն անցկացվեց Ադրբեջանի նախագահի ամառային նստավայրում:

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՐԿՐԻՑ ՉՀԵՌԱՆԱԼՈՒ ԿՈՉԸ

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը երկրի երիտասարդությանը կոչ արեց չհեռանալ Վրաստանից եւ չխուսափել աշխատանքից:

«Մեր երիտասարդները մեկնում են արտասահման, ծառայություններ մատուցում օտարների տանը այն ժամանակ, երբ մեր երկիր են գալիս օտարերկրացիներ ու զբաղեցնում մեր հողերը: Ուստի, բոլորին կոչ եմ անում խորհել մեր ապագայի մասին»,- կիրակնօրյա պատարագին հայտարարեց Կաթողիկոս-Պատրիարքը: Նա ցավով նշեց, որ գյուղերի երիտասարդները խուսափում են աշխատել հողի վրա եւ փնտրում են նվազ աշխատատար աշխատանք: «Մենք միշտ ձգտել ենք մոտ լինել հարազատ հողին: Այսօր մեր քաղաքացիները փնտրում են այնպիսի եկամուտ, որտեղ առանձնակի աշխատանք չի պահանջվում»,- հայտարարեց վրացական եկեղեցու Հովվապետը եւ հավատացյալներին կոչ արեց չլքել հայրենիքը եւ աշխատել ի բարօրություն երկրի:

ԾՐԱԳՐՎՈՒՄ Է ԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈ՞ՒՆ...

«Վրացական երազանք» կոալիցիան մտադիր է ձեւավորել Լեռնային գոտու նախարարություն: Այդ մասին հայտարարեց բնապահպանության խորհրդարանական կոմիտեի նախագահ Գիա Ժորժոլիանին:

«Լեռնային գոտու մասին» օրենքը նախատեսում է խրախուսիչ տարբեր միջոցառումներ այն հաշվով, որպեսզի լեռնային գոտու զարգացումն արագացվի: Այդ առումով, նշանակալից է գործադիր մեխանիզմների հիմնումը: Կարծում եմ, որ կառավարությունը հաշվի կառնի սույն նախաձեռնությունը, որը նախատեսում է պետնախարարի հատուկ պաշտոնի հիմնում: Վերջինս կապահովի օրենքով նախատեսված բարձրալեռ տարածաշրջանների զարգացման միջոցառումների համակարգումը»,- հայտարարեց Գիա Ժորժոլիանին:

ԱՌԳՐԱՎՎԵԼ Է ԱՊՕՐԻՆԻ ՓԱՅՏԱՆՅՈՒԹ

Հետաքննչական միջոցառումների արդյունքում, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում ապօրինի անտառահատման փայտանյութի տեղափոխման եւ մշակման համար ձերբակալվել են մի շարք անձինք: Իրավապահ մարմինների աշխատակիցներն առգրավել են մի քանի տասնյակ խորանարդ մետր ապօրինի փայտանյութ:

ՆԵՐՈՒՄ՝ 226 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

Ինչպես հայտարարեց Վրաստանի նախագահին առընթեր ներման հանձնաժողովի ղեկավար Ջվիադ Քորիձեն, նախագահի հրամանագրով, ներում է շնորհվել 226 բանտարկյալի: Նրանցից 180-ը կազատվեն արգելավայրից: Ներման արժանացածների թվում են 14 կին եւ մեկ անչափահաս:

Ընդհանուր առմամբ, ներման հանձնաժողովը քննարկել է 1329 բանտարկյալի դիմում:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՓՈԿԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՀԻԱՑՐԻՆ ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ԻՐԵՆՑ ԻՄԱՑՈՒԹՅԱՄԲ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցության անհրաժեշտության մասին եւ հետաքրքրվեց, թե որքանով են երեխաներն օգտվել չորս ամիս առաջ դպրոցին նվիրած վրաց գրականությունից:

- Ուրախ եմ, որ մեր այս հանդիպումներն սկսում են պարբերական բնույթ կրել,- այսպես սկսեց իր զրույցը Թեա Ծուլուկիանին:- Ուրախ եմ նաեւ այն փոփոխությունների կապակցությամբ, ինչը նկատեցի առավելապես երեխաների կողմից վրաց լեզվի ուսուցման հարցում: Դա, իրոք, ողջունելի փաստ է: Կցանկայի, որ դուք լիովին ընկալեիք վրաց լեզվի իմացության նշանակությունը: Նախորդ այցելության ժամանակ՝ անցած ձմռանը, ես բերեցի վրաց գրականություն, հիմա կցանկայի իմանալ, թե այդ գրքերից ինչպե՞ս եք կարողացել օգտվել:

Ձեր ելույթները հստակորեն ցույց տվեցին, որ Փոկայում գործող մեր նախարարության Հասարակական տունը իր գործառույթներով նշանակալի դեր է կատարում: Թեպետ, ինչպես պարզվեց, դուք է'լ ավելի կցանկանայիք ընդլայնել դրա գործունեության շրջանակները՝ բացել գրադարան, պարի խումբ եւ այլն: Ցավոք, ի տարբերություն այլ գյուղերում գործող Հասարակական տների, այստեղ էլեկտրոնային գրադարան, հանդիպումների համար նախատեսված դահլիճ չկա: Դա բացթողում է, որ պետք է կարգավորվի:

Այստեղ ինձ հետ ձեզ հյուր են եկել մեր համակարգի աշխատակից, մեր նոտար Ռոման Կոստանյանը, վրացական բանակի նախկին զինծառայող, այսօր բիզնեսմեն Արթուր Կազարովը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը: Նրանցից յուրաքանչյուրի ձեռքբերումների հիմքում երկրի պետական լեզվի իմացությունն է, բնականաբար նաեւ էլ ավելիին հասնելու միտումնավորությունը: Ռոմանը մեր համակարգի լավագույն աշխատակիցներից է, իր գործի արհեստավարժ մասնագետը:

Այս ուղեւորության համար ես Արթուրին հատուկ խնդրեցի, որ ուղեկցի: Արթուրը 2000 թվականից ծառայում է վրացական բանակում եւ երկրի ամենադժվարին պահին՝ 2008 թվականի օգոստոսին, նա իր մյուս զինակիցների հետ մարտադաշտում պաշտպանեց մեր հայրենքի անկախությունը, մեր բոլորի ազատությունն ու խաղաղությունը:

Առանձնակի կցանկանայի խոսել արհեստավարժ լրագրող, բոլորին քաջածանոթ Վան Բայբուրթյանի մասին: Նա այն հասարակական եւ քաղաքական գործիչներից է, ով իր հանրաճանաչությունը օգտագործում է կոնկրետ հարցերի լուծման, հանրությանը անհանգստացնող հիմնախնդիրների կարգավորման համար:

Սիրելի դպրոցականներ, դեռեւս նախորդ հանդիպմանը դուք ցանկություն հայտնեցիք ուղեւորություններ իրականացնել Վրաստանի տարածաշրջաններում: Մենք այն ժամանակ պայմանավորվեցինք, որ նման ուղեւորությունները կանցկացնենք ամռանը: Կարծում եմ՝ հիմա հիանալի ժամանակ է նման միջոցառման անցկացման համար: Մեր նախարարությունը կֆինանսավորի դպրոցի աշակերտների ուղեւորությունը Սվանեթի: Կարծում եմ, որ միջոցառման կազմակերպման գործում մեզ կաջակցի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը:

Ելույթ ունենալով դպրոցականների առջեւ՝ Ռոման Կոստանյանն ընդգծեց. «Կցանկանայի բարեկամական խորհուրդ տալ՝ սովորեք վրացերենը, այն ձեր ապագա առաջընթացի նախադրյալն է: Լեզվի տիրապետումը ձեզ թույլ կտա ուսումը շարունակել Թբիլիսիում: Վրացական բուհերում մասնագիտական ընտրության տեսակետից մեծ է, ուղղակի պետք է ցանկություն ունենալ եւ, ամենակարեւորը՝ միտվածություն: Կարծում եմ՝ այդ ամենը ձեզ մոտ կա, ուստիեւ հաջողությունն էլ երկար սպասեցնել չի տա:

- Տիկին Թեան օրինաչափորեն նշեց այն առաջընթացը, որը վերջին չորս ամիսների ընթացքում դուք ձեռք եք բերել վրաց լեզվի ուսուցման գործում: Այս կարճ ժամանակահատվածում դուք ձեր վրաց լեզվի ուսուցչուհի Կլարա Փոցխերիշվիլու հետ հասել եք մեծ բարձունքների: Դա հիանալի է, քանի որ լեզվի իմացությունն այն նախադրյալն է, որը ձեզանից յուրաքանչյուրին թույլ կտա այստեղ՝ Վրաստանում, ստանալ բարձրագույն կրթություն, դառնալ լավ մասնագետ, ունենալ պատկառելի, լավ վարձատրվող աշխատանք, լինել երջանիկ, ապրել հարազատ հողում,- իր խոսքում ասաց Վան Բայբուրթյանը եւ ապա շարունակեց,- նաեւ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել տիկին Թեային նման հանդիպումների անցկացման համար, քանզի համոզված եմ, որ կոնկրետ այս եւ չորս ամիս առաջ կայացած հանդիպումը յուրատեսակ ազդակ էր ձեզ համար: Լավ կլիներ, որ մյուս նախարարներն էլ նման հանդիպումներ անցկացնեն Վրաստանի ազգային փոքրամասնություններով հոծաբնակ շրջաններում:

Հանդիպմանը արդարադատության նախարարը տեղեկատվություն հաղորդեց Փոկայի հանրային դպրոցի ավարտական դասարանի աշակերտներին հատուկ նրանց համար ծրագրված համակարգչային ունակությունների վարժանքի վերաբերյալ եւ ներկայացրեց մարզչին: Հասարակական կենտրոնում շուրջ 50 երիտասարդ կանցնի համակարգչային դասընթացներ: Դասընթացի տեւողությունը երկու շաբաթ է: Իններորդ եւ տասներորդ դասարանի աշակերտներին կտրվի գրասենյակային ծրագրերի յուրացման հնարավորություն:

Նշենք, որ համակարգչային ունակությունների այս վարժանքն առաջինը չէ, որ անցկացվում է Փոկայի հասարակական կենտրոնում: 2014 թվականից, Թեա Ծուլուկիանու նախաձեռնությամբ, այստեղ գործում են վրաց լեզվի ինտենսիվ ուսուցման դասընթացներ:

Հանդիպման ավարտին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին տեղի յոթ բնակիչների անձամբ հանձնեց Վրաստանի քաղաքացու անձնագիր, դրանց թվում երեքին, ովքեր ունեին ուրիշ պետության քաղաքացիություն, շնորհվեց Վրաստանի քաղաքացիություն:

Այցի շրջանակներում, Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին մասնակցեց հասարակական կենտրոնի բակի կանաչապատման միջոցառմանը:

Նա, խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանի ու «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանի հետ միասին, կենտրոնի բակում տնկեց «Բարեկամության ծառ»:

Եվս մեկ անգամ ընդգծենք, որ հասարակական կենտրոնի շրջակայքի կանաչապատման միջոցառման նախաձեռնողը արդարադատության նախարարն է եւ, ինչպես հայտարարեց նա, միջոցառման նպատակը բնության նկատմամբ հոգատարությունն ու գյուղի բնակիչների համար բնական միջավայրի բարելավումն է: Տեղի բնակիչներին այս միջոցառման ներգրավումը թույլ է տալիս ուշադրության կենտրոնում պահել Հասարակական կենտրոնն ու նրա հիմնախնդիրները: Այն, 200-ից ավելի սպասարկումների մատակարարումից բացի, հնարավորություն է ընձեռում այդտեղ անցկացնել հավաքներ եւ հանդիպումներ:

Մեր հատուկ թղթակից

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՀԱՆՐԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նասիրության մոտեցումն առանձին ոլորտների նկատմամբ քննադատական է, իսկ մյուսների նկատմամբ՝ խրախուսիչ: «Հատկանշական է, որ գնահատվել էին ոչ միայն պետական ինստիտուտները, այլեւ բոլոր այն հատվածները, որոնք ներկայացնում են ժողովրդավարական արդի պետությունը: Մենք հետաքրքրությամբ ենք ուսումնասիրում սույն վերլուծությունը: Դա խիստ կարեւոր ուղերձ է, որպեսզի հստակեցվեն, թե որ ուղղություններով կարող են ծագել հիմնախնդիրներ, եւ թե որ ուղղություններով պետք է զարգանա մեր պետությունը»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Շնորհանդեսին «Միջազգային թափանցիկություն-Վրաստան» կազմակերպությունը ներկայացրեց Վրաստանի 12 ինստիտուտների գործունեության վերլուծությունը: Մասնավորապես, գնահատվել էին խորհրդարանի, կառավարության, դատարանի, պետական ծառայության, իրավապահ մարմինների, ընտրական վարչակազմի, ժողովրդական պաշտպանի աշխատակազմի, պետական աուդիտի ծառայության, քաղաքական կուսակցությունների, ՁԼՄ-ների, քաղաքացիական հասարակության եւ բիզնեսի գործունեությունները:

Վերլուծության համաձայն, կոռուպցիայի կանխման տեսանկյունից, 2011 թվականի համեմատությամբ, դրական տեղաշարժեր են նկատվել ընտրական վարչակազմում, պետաուդիտի ծառայությունում, ՁԼՄ-ներում, քաղաքացիական հասարակությունում եւ դատական համակարգում: Ընդ որում, բարձրագույն՝ 71-ական միավորի են արժանացել ընտրական աշխատակազմն ու պետաուդիտի ծառայությունը: Միաժամանակ, նվազեցվել է կառավարության, իրավապահ մարմինների եւ պետական ծառայությունների հակակոռուպցիոն գնահատականը:

Հաշվետվության հեղինակների կարծիքով, դրական գնահատականի է արժանի ՁԼՄ-ների անկախության աճը, ինչը իր արտահայտությունն է գտել քաղաքական գործընթացների եւ կառավարության գործունեության բազմաբնույթ ու հավասարակշռված ներկայացման մեջ: Հաշվետվության տվյալներով, առավել անկախ է դարձել դատարանը, ինչն արտահայտվել է քրեական գործերի քննարկումներում դատավորների ցուցաբերած համարձակ դիրքորոշմամբ: Խորհրդարանը եւս դարձել է բազմակարծիք եւ կառավարությունից անկախ:

Բացասական միտումներից գրանցվել է կառավարության վրա արտաքին ոչ պաշտոնական ազդեցությունը, ինչը նվազեցնում է վերջինիս անկախության մակարդակը: Որոշակի կախվածություն է զգացվում նաեւ խորհրդարանի գործունեությունում՝ կառավարության գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողության տեսանկյունից: Նախկին պետական պաշտոնյաների նկատմամբ քրեական գործերում նկատվել են քաղաքական մոտեցման եւ ընտրական արդարադատության միտումներ, ինչը որոշակի ստվեր է գցում դատարանի եւ իրավապահ մարմինների անկախության վրա: Հաշվետվության հեղինակների մոտ որոշակի տագնապ է հարուցում պետական ծառայություններում առանձին պաշտոնյաների նշանակման գործընթացում տիրող կանխակալ մոտեցումը: